




Ֆ. ԵՆԳԵԼՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ
ԿԱՊԿԻ ՄԱՐԴՈՒ
ՓՈԽԱՐԿՎԵԼՈՒ
ՊՐՈՑԵՍՈՒՄ



4 NOV 2009
1 2 MAY 2005
ՊՐՈԼԵՏԱՐԵՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՐ

3K13
U-65
WJ

ՖՐ. ԵՆԳԵԼՍ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ
ԿԱՊԿԻ ՄԱՐԴՈՒ
ՓՈԽԱՐԿՎԵԼՈՒ ՊՐՈՑԵՍՈՒՄ

224
7

055
CP

1330
40

Ф. ЭНГЕЛЬС

РОЛЬ ТРУДА В ПРОЦЕССЕ
ПРЕВРАЩЕНИЯ ОБЕЗЬЯНЫ В ЧЕЛОВЕКА

Государственное издательство политической литературы

Вреван • 1940

ԽԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Մարդու առաջացման պրոցեսում աշխատանքի ունեցած դերի վերաբերյալ Ենգելսի՝ իր ծավալով վոչ մեծ աշխատությունը գիտական հսկայական նշանակություն ունի: Գրված լինելով շատ հանրամատչելի, նա միևնույն ժամանակ այն կարևորագույն պրոբլեմների խոր անալիզի և տալիս, վերոնք կանգնած են բնագիտության և մարդկային հասարակության գիտության սահմանի վրա:

Մարդու ծագման հարցն ամենահետաքրքիր ու կարևորագույն գիտական պրոբլեմների թվին է պատկանում: Այս հարցի շուրջն առանձնապես կատաղի պայքար է մղում գիտությունը՝ ընդդեմ տերտերականության, մատերիալիզմի ընդդեմ իդեալիզմի: Դարվինը գիտական հաստատուն հիմք դրեց այս հարցը բիոլոգիական կողմից լուծելու համար: Սակայն այս պրոբլեմի մյուս կողմը՝ սոցիոլոգիական կողմը՝ Դարվինի մոտ անմշակ մնաց: Դրա համար էլ, ինչպես մատնանշում է Ենգելսը, Դարվինի դպրոցից յեւած նույնիսկ ամենից ավելի մատերիալիստորեն տրամադրված բնագետները չկարողացան պարզ պատկերացում կազմել մարդու ծագման մասին, քանի վոր, դանվելով իդեալիզմի ազդեցության տակ, նրանք չէին տեսնում «այն դերը, վոր այս դործում խաղացել է աշխատանքը»:

Յեւ ահա Ենգելսը չգերազանցված վարպետությամբ լուսաբանում է աշխատանքի առաջնակարգ և վճռական դերը մարդու Ֆիզիկական ախյի ձևավորման և մարդկային հասարակության կազմավորման խնդրում, ցույց տալով, թե ինչպես կապիկից ժամանակի ընթացքում դարդացել է նրա-

նից վորակապես տարբեր մի եյակ՝ մարդը: Հետամտելով աշխատանքի դերին մարդու ձևավորման պրոցեսում և այնուհետև մարդկային հասարակության հետագա եվոլյուցիայի պրոցեսում, Ենդելսը զուգընթացաբար բացահայտում է այն պատմական պատճառները, վորոնք զարգացման վորոշ աստիճանների վրա հասցրին իդեալիստական աշխարհայեցողության առաջացմանը, և ցույց է տալիս այն պրոցեսները, վորոնք հետագայում անհնարին են դարձնում այդ՝ «վոգու և մատերիայի, մարդու և բնության, հոգու և մարմնի միջև ինչ-վոր հակադրության անխմստ և հակաբնական պատկերացումը»:

* * *

«Աշխատանքի դերը կապվի՝ մարդու փոխարկվելու պրոցեսում» ուրվագիծը Ենդելսն սկզբնապես գրել էր վորպես մեքաթուքյուն ալեյի ընդարձակ աշխատության համար, վորի վերնագիրն էր «Ստրկության յերեք հիմնական ձևերը»: Այնուհետև Ենդելսը փոխեց այս խորագիրը և դարձրեց «Բանվորի ստրկացում»: Բայց վորովհետև այս աշխատությունն անավարտ մնաց, ապա Ենդելսը, վերջի վերջո, իր գրած ներածական մասը խորագրեց՝ «Աշխատամեքի դերը կապվի՝ մարդու փոխարկվելու պրոցեսում», վորը համապատասխանում է այս աշխատության ձեռագրի առաջին 8—9 եջերի բովանդակությանը (ձեռագրի վերջին 2—3 եջերը անցումն են աշխատավոր մարդկության ստորկացման վերաբերյալ թեմայի ալեյի անմիջական քննարկման): «Աշխատանքի դերը կապվի՝ մարդու փոխարկվելու պրոցեսում» («Anteil der Arbeit an der Menschwerdung des Affen») խորագիրը Ենդելսի մոտ հանդես է գալիս իր կազմած այն հինգ հոդվածների ցանկում, վորոնք կազմում են «Բնության դիալեկտիկայի» նյութերի յերկրորդ կապուցը, վորին տրված է «Բնության ուսումնասիրությունը և դիալեկտիկան» վերնագիրը: Աշխատությունը գրված է, ըստ յերևութի, 1876 թվին: Այս յենթադրության ոգտին է խոսում Վիլհելմ Լիբկնիստի 1876 թվի հունիսի 10-ին Ենդելսին գրած նամակը, վորի մեջ Լիբկնիստը, ի միջի այ-

լոց, գրում է, թե ինքը անհամբերությամբ սպասում է «Volksstaat» թերթի համար Ենդելսի խոստացած «Ստրկության յերեք հիմնական ձևերի մասին» աշխատությանը: 1896 թվին աշխատանքի դերի վերաբերյալ ուրվագիծը հրապարակեց Բեռնշտայնը «Die Neue Zeit» ժուռնալում (Jahrgang XIV, Band 2, S. 545—554):

Ներկա հրատարակության համար Ենդելսի հոդվածի ուսերեն թարգմանությունը նորից ստուգվել է «Բնության դիալեկտիկայի» գերմաներեն վերջին հրատարակության (Մոսկվա—Լենինգրադ, 1935) գերմաներեն տեքստով, իսկ այս գերմաներեն տեքստը համեմատված է Ենդելսի ձեռագրի Ֆրոտ-պատճենների հետ: Ռուսերեն թարգմանության ստուգումը նախորդ ուսական հրատարակությունների մի շարք սխալներ ու անճշտություններ յերևան բերեց: Գերմաներեն տեքստի ստուգումը մեկ եյական սխալ (697 եջի վրա, տող 36, «Menschengeschlecht» բառի փոխարեն պետք է կարգալ «Menschengesellschaft») և մի շարք մանր վրիպակներ հայտարարեց: Ներկա հրատարակությունը տպագրության համար նախապատրաստել է Վ. Կ. Բրուշկինսկին:

Համկ(բ)Կ ԿԿ կից
Մաքսի—Ենգելսի—Լենինի իմստիաուն

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԵՐԸ ԿԱՊԿԻ ՄԱՐԴՈՒ
ՓՈԽԱՐԿՎԵԼՈՒ ՊՐՈՑԵՍՈՒՄ

Աշխատանքն ամեն մի հարստութեան տղայունքն է, պըն-
դում են քաղաքատնտեսները: Նա իսկապես այսպիսին է
հանդիսանում բնութեան հետ միասին, վորը նրան նյութ է
մատակարարում, իսկ այդ նյութը նա հարստութեան է
փոխարկում: [Իսկ աշխատանքն անսահմանորեն ավելի մեծ
ինչ-վոր բան էլ է, քան այս: Նա մարդկային ամբողջ
կյանքի առաջին հիմնական պայմանն է] և այն էլ այն առ-
տիճան, վոր մենք վորոշ իմաստով պիտի ասենք՝ աշխա-
տանքն է հենց մարդուն ստեղծել:

Հարցուր-հաղարավոր տարիներ սրանից առաջ, յերկրի
զարդացման այն ժամանակաշրջանի դեռ ճշգրիտ վորոշման
չենթարկվող ժամանակամիջոցում, վորը յերկրաբանները
յերրորդային են անվանում, յենթադրաբար այս ժամանա-
կաշրջանի վերջում, տաք դոտու ինչ-վոր մի տեղում—ամե-
նայն՝ հայկանականութեամբ այն լայնարձակ մայր ցամա-
քում, վոր այժմ սուղված է Հնդկական ովկիանոսի հատա-
կը,—ապրում եր արտասուիւր բարձր զարդացման հասած
մարդանման կապիկների մի ցեղ: Մարդիկը մեզ տվել է մեր
այդ նախնիքների մոտավոր նկարադրութիւնը: Նրանք ամ-
բողջովին ծածկված էին մազերով, ունեյին մորուք և
սրածայր ականջներ ու ապրում էին հոտերով ծառերի
վրա:

Պետք է կարծել, վոր առաջին հերթին իրենց կյանքի
յեղանակի ազդեցութեան տակ,—մի յեղանակ, վորը պա-
հանջում է, վորպեսզի մազըցելիս ձեռքերն այլ ֆունկցիա-

ներ կատարեն, քան վտանները—այս կապիկներն սկսեցին
գետնի վրա գնալիս թողնել ձեռքերի ողնությանը դիմելու
սովորութիւնը և սկսեցին ավելի ու ավելի ուղիղ քայլ-
վածք յուրացնել: Դժանով վնասկան քայլ արվեց կապիկից
մարդուն անցնելու համար:

Դեռ քայլել գոյութիւն ունեցող բոլոր մարդանման
կապիկները կարող են ուղիղ կանգնել և ման գալ միմի-
այն վտանների վրա, բայց միայն ծայրահեղ անհրաժեշտու-
թյան դեպքում և վերին աստիճանի անճոռնի կերպով:
Նրանց բնական ման գալը կատարվում է կիսով չափ ուղիղ
գիւղքով և ձեռքերի գործադրմամբ: Նրանց մեծամասնու-
թյունը քայլելիս գետնին հենվում են ձեռքերի ձկած մատ-
ների միջին խաղերով և, ծալելով վտանները, մարմինն
առաջ են շարժում յերկար ձեռքերի միջև, ինչպես անթա-
ցուպերով քայլող կաղը: Ընդհանրապես մենք այժմ եւ գետ
կարող ենք կապիկների մոտ դիտել չորեքթաթ քայլվածքից
մինչև յերկու վտանների վրա քայլելը յեղած անցման բոլոր
ատիճանները: Բայց կապիկներից վոչ մեկի մոտ յերկու
վտանների վրա քայլելը չդարձավ վտրեւ ավելի մեծ քան,
քան հարկադրված մի պրիքմ, վոր գործադրվում է ծայրա-
հեղ դեպքում:

Վարպետի ուղիղ քայլվածքը կարողանար մեր մաղոս նախ-
նիքների մոտ սկզբում կանոն, իսկ հետո նաև անհրաժեշտու-
թյուն դառնալ, պետքեր, վոր միաժամանակ ձեռքերին դոր-
ծունեյության ավելի ու ավելի շատ ալ տեսակներ բաժին
ընկնէին: Արդեն կապիկների մոտ եւ գոյութիւն ունի Փունի-
ցիաների վորոշ բաժանում ձեռքերի և վտանների միջև:
Ինչպես արդեն հիշեցինք, մաղցելիս ձեռքերն ալ կերպ են
ողտադործվում, քան վտանները: Ձեռքն առավելապես ծա-
ռայում է կերակուր հալաքելու և բռնելու նպատակների
համար: Ինչպես այս արդեն անդամ են ստորին կաթնասուն-
ներից վոմանք՝ իրենց առջևի թաթերի ողնությամբ: Ձեռ-
քի ողնությամբ կապիկներից վոմանք իրենց համար ծառե-
րի վրա բներ են չինում կամ նույնիսկ՝ ծածկեր ճյուղերի
միջև, ինչպես չիմպանզեն՝ վատ յեղանակից պաշտպանվե-
լու համար: Ձեռքով նրանք մահակներ են ճանկում թշնա-

միններից պաշտպանվելու համար կամ վերջիններս ուրա-
կոծում են պտուղներով ու քարերով: Հենց ձեռքի ողնու-
թյամբ նրանք գերության մեջ մի շարք պարզ ուղեքայիա-
ներ են կատարում, վոր ընդորինակում են մարդկանցից:

Բայց հենց այստեղ է, վոր յերևան է գալիս, թե վորքան
մեծ է հեռավորութիւնն անգամ ամենաբարձր մարդանման
կապիկների չգարգացած ձեռքի և մարդկանց՝ հարյուր-
հազարավոր տարիների աշխատանքով կատարելադրված
ձեռքի միջև: Յերկուսն եւ վոսկրների և մկանների միե-
նույն թիւն ու դասավորութիւնն ունեն և, այնուամենայ-
նիւ, անգամ ամենանախնական վայրենու ձեռքն ընդունակ
է կատարելու հարյուրավոր ուղեքայիաներ, վորոնք վոչ մի
կապիկ մատչելի չեն: Վոչ մի կապիկային ձեռք յերկեցի չի
չինել թեկուզ ամենակոպիտ քարէ դանակ:

Այդ պատճառով եւ այն ուղեքայիաները, վորոնց մեր
նախնիքները կապիկից մարդուն անցնելու եպոխայում,
հարյուր-հազարավոր տարիների ընթացքում, աստիճանա-
բար սովորեցին հարմարեցնել իրենց ձեռքը, սկզբում շատ
հասարակ միայն կարող ելին լինել: Ամենաստորին վայրե-
նիները և անգամ դրանցից նրանք, վորոնց նկատմամբ հարկ
է լինում յենթադրել, թե վերադարձել են ավելի կենդանա-
նման վիճակի և միաժամանակ Փիլիկապես վերասերվել են,
այնուամենայնիւ անհամեմատ ավելի բարձր են կանգնած,
քան անցումնային այն եյակները: Մինչև վոր առաջին
կայծքարը մարդու ձեռքի Օղնությամբ դանակ դառնար,
պետք է, հավանորեն, այնպիսի յերկարատեւ ժամանակամի-
ջոց անցներ, ի՞նչ, դրա համեմատությամբ, մեզ հայտնի
պատմական ժամանակաշրջանն աննշան է: Բայց վնասկան
քայլն արված էր. մեռն դարձավ ազատ և այժմ կարող էր
ավելի ու ավելի նորանոր հմտութիւններ յուրացնել, իսկ
դրանով ձեռք բերված ավելի մեծ ճկունութիւնը ժառան-
գարար փոխանցվում էր ու սերնդէ սերունդ աճում:

Ձեռքն այսպիսով ի՞նչ միայն աշխատանքի օրդան է,
այլ նաև նրա արդյունքն է: Միայն չնորհիւ աշխատանքի
չնորհիւ նորանոր ուղեքայիաների հարմարվելու, չնորհիւ
մկանների, հոդակապերի և ավելի յերկար ժամանակամի-

ընդներում՝ նաև Վոսկրեսերի այս կերպ ձեռք բերած առանձնահատուկ զարգացումը ժառանգաբար փոխանցելու, և շնորհիվ ժառանգաբար փոխանցված այս կատարելագործումների նոր, ավելի ու ավելի բարդ Օպերացիաների վերաբերմամբ նորակերպ գործադրելու, — միայն այս ամենի շնորհիվ մարդու ձեռքը հասավ կատարելության այն բարձր աստիճանին, իորի վրա նա կարողացավ, կարծես թե դյուրեւեակն ուժով, կյանքի կոչել Ռաֆայելի նկարները, Տորվադսենի արձանները, Պադանինիի յերաժշտությունը:

Միայն ձեռքն ինչ-ձոր ինքնաբավ բան էջր: Նա ամբողջական, ծայր աստիճան բարդ օրգանիզմի անդամներից մեկն էր միայն: Յեւ այն, ինչ օգտակար էր ձեռքի համար, օգտակար էր նաև ամբողջ մարմնի համար, Վորեն ծառայում էր ձեռքը, և օգտակար էր չերկակի առումով:

Նախ և առաջ՝ այն օրենքի դրույթյամբ, իոր Դարվինն ածման հարաբերակցութեան օրենք է անվանել: Այս օրենքի համաձայն օրգանական էջակի առանձին մասերի Վորու ձեռքը միշտ կապված են մյուս այն մասերի Վորու ձեռքի հետ, Վորոնք, ըստ չերկուծին, առաջինների հետ Վոր մի կապ չունեն: Այսպես, օրինակ, առանց բացատրութեան բոլոր այն կենդանիները, Վորոնք ունեն արյան կարմիր մարմնիկներ առանց բջջակորիզի և վորոնց ծոծրակուսկրը միացած է առաջին վորնի հետ չերկու հոգային թմբիկներով, ունեն նաև կաթնագեղձեր ձաղերին կերակրելու համար: Այսպես, կաթնասունների կճղակները, վորպես կանոն, կապված են բարդ, վորոճալու պրոցեսին հարմարված, ստամոքսի առկայութեան հետ: Վորու ձեռքի փոփոխությունները մարմնի մյուս մասերի ձեռի փոփոխություն են առաջ բերում, թեպետ մենք ի վիճակի ել չենք բացատրելու այս կապը: Բոլորովին սպիտակ կապտաշյա կատունները միշտ կամ համարյա միշտ խուլ են լինում: Մարդու ձեռքի առանձնական կատարելագործումը և դրա հետ տեղի ունեցող վորի զարգացումն ու ուղիղ քայլվածքին հարմարվելը, նույնպես հարաբերակցութեան օրենքի գործութեամբ, անկասկած հակադարձ ազդեցություն է ունեցել օրգանիզմի մյուս մասերի վրա: Մակայն այս կարգի ներ-

գործութեանը դեռ շատ քիչ և ուսումնասիրված, և մենք կարող ենք այն այստեղ հավաստել ընդհանուր ձևով միայն: —

Չալիորեն ավելի կարևոր է ձեռքի զարգացման ուղղակի, պարզուցման չենթարկվող հակադարձ ներդրութեանը մնացած օրգանիզմի վրա: Մեր կապկանման նախնիքները, ինչպես արդեն ասված է, համարակական կենդանիներ էին. միանգամայն ակներև է, Վոր մարդու՝ բոլոր կենդանիներից այս ամենից ավելի հասարակականի, ծագումը չի կարելի դուրս բերել Վոջ-հասարակական մերձավորագույն նախնիքներից: Ձեռքի զարգացման հետ միասին, աշխատանքի հետ միասին սկսված իշխումը բնութեան վրա յուրաքանչյուր նոր քայլափոխում, վոր արվում էր դեպի առաջ, ընդլայնում էր մարդու հորիզոնը: Բնութեան առարկաների մեջ նա շարունակ նոր, մինչ այդ անհայտ հաղկություններ էր հայտարարում: Մյուս կողմից, աշխատանքի զարգացումն անհրաժեշտաբար նպաստում էր հասարակութեան անդամների ավելի սերտ համախմբման, վորովհետև աշխատանքի շնորհիվ ավելի հաճախակիանում էին փոխադարձ աջակցութեան, համատեղ գործունեկութեան դեպքերը, և յուրաքանչյուր առանձին անդամի համար ավելի պարզ դարձավ այդ համատեղ գործունեկութեան Զարի դիտակցությունը: Կարճ ասած, ձեռքի զարգացումը մարդիկ հասան այն բանին, Վոր նրանց մեջ պահանջ առաջ չեկավ միմյանց մի բան ասելու: Պահանջը ստեղծեց իր օրգանը. կապի անզարգացած կոկորդը մոգուլացիայի միջոցով դանդաղ, բայց անշեղորեն փոխակերպվում էր ավելի ու ավելի զարգացած մոգուլացիայի համար, իսկ բերանի օրգաններն աստիճանաբար սովորում էին արտասանել մեկ հոգաբաշխ հնչյուն մյուսի հետևից:

Վոր աշխատանքի պրոցեսի և աշխատանքի հետ միասին լեզվի առաջացման այս բացատրութեանը միակ ճիշտն է, ապացուցում է համեմատութեանը կենդանիների հետ: Այն քիչ բանը, Վոր այս վերջինները, անգամ նրանցից ամենից ավելի զարգացածները, ունեն միմյանց հաղորդելու, կարող է հաղորդվել առանց հոգաբաշխ խոսքի:

Բնական վիճակում Պոչ մի կենդանի անհարմարություն չի
զգում խոսել չկարողանալուց կամ մարդկային խոսքը
չհասկանալուց: Բուրբուլին այլ գրություն է առաջ դալիս,
Վերը կենդանին՝ ընտելացված է մարդու կողմից: Շունը և
ձին, մարդկանց հետ շփվելու շնորհիվ, իրենց մեջ այնպի-
սի զգայուն ակնհիշ են զարգացրել հոգաբաշխ խոսքի նկատ-
մամբ, Պոր, պատկերացումների նրանց հատուկ շրջանի
սահմաններում, նրանք հեշտությամբ են սովորում հասկա-
նալ ամեն մի լեզու: Նրանք, բացի այդ, այնպիսի զգացում-
ների ունակություն են ձեռք բերել, ինչպես մարդու հան-
դեսը ունեցած կապվածության զգացումն է, յերախտադի-
տության զգացումը և այլն, Պորոնք առաջ խորթ նշան
նրանց համար: Ամեն Պոչ, ով շատ է գործ ունեցել այնպի-
սի կենդանիների հետ, հաղիվ թե կարող է հրաժարվել այն
համոզումից, թե կան բավականաչափ դեպքեր, Վերը նրանք
իրենց խոսելու անընդունակությունն այժմ Պորպես պակա-
սություն են զգում: Տարաբախտաբար, նրանց ձայնային
որգաններն աչքքան են մասնաշխտացած Պորոչ ուղղու-
թյամբ, Պոր նրանց այդ վշտին արդեն Պոչ մի կերպ չի
կարելի ողնել: Սակայն այնտեղ, Պորտեղ կա հարմար Ծր-
զան, այս անընդունակությունը Պորոչ սահմաններում,
կարող է անհետանալ: Թռչունների բերանի օրգաններն, ի-
հարկե, արմատապես տարբերվում են մարդու համապա-
տասխան օրգաններից: Բայց և այնպես թռչուններն այն
միակ կենդանիներն են, Պորոնք կարող են խոսել սովորել,
և ամենազարչելի ձայն ունեցող թռչունը, թուփակը, ամե-
նից լավ է խոսում: Քեյ թող չառարկեն, թե թուփակը չի
հասկանում այն, ինչ խոսում է: Իհարկե, նա Ժամեր չա-
րունակ առանց ձայնը կտրելու կկրկնի խոսքերի իր ամբողջ
սրաչար՝ խոսելու պրոցեսի հանդեպ և մարդկանց հետ հա-
ղորդակից լինելու հանդեպ տաժած սիրուց միայն դբրդ-
ված: Բայց պատկերացումների իր շրջանի սահմաններում
նա կարող է սովորել նաև իր խոսածը հասկանալ: Սովոր-
եցրեք թուփակին հայհոյական խոսքեր այնպես, Պոր նա
պատկերացում ստանա գրանց նշանակության մասին (տա-
րբերկրներից վերադարձող նավատիկների գլխավոր զվար-

ճություններից մեկը), փորձեցեք հետո նրան բարկացնել,
և դուք շուտով յերևան կհանեք, վոր նա կարողանում է իր
հայհոյական բառերը նույնքան ճիշտ գործադրել, ինչպես
Բեռլինի բանջարավաճառ կինը: Զիշտ այդպես էլ քաղցրե-
ղեն աղերսելիս:

Սկզբում աշխատանքը, իսկ հետո դրա հետ միասին
նաև հոգաբաշխ խոսքն այն քերկու գլխավոր խթանները քե-
ղան, վորոնց աղղեցության տակ կապիկ ուղեղն առտիճա-
նաբար մարդկային ուղեղի փոխարկվեց, վորը, կապիկ ուղե-
ղին շատ նման լինելով հանդերձ, իր մեծությամբ և կա-
տարելությամբ շատ է գերազանցում նրանից: Իսկ ուղեղի
հետագա զարգացմանը զուգընթաց ընթանում էր նրա մեր-
ձավորադույն գործիքների՝ զգայության օրգանների հետա-
գա զարգացումը: Ինչպես վոր լեզվի աստիճանական վար-
գացումը շարունակ ուղեկցվում է լսողության օրգանի հա-
մապատասխան նրբացմամբ, ճիշտ այդպես էլ ուղեղի զար-
գացումն ընդհանրապես ուղեկցվում է բոլոր զգայարանների
ամբողջության կատարելագործմամբ: Սրժիվը նշանակելիո-
րեն ավելի հեռուն է տեսնում, քան մարդը, բայց թե մար-
դու աչքն իրերի մեջ զգալիորեն շատ ավելի բան է տես-
նում, քան արժիլի աչքը: Շունը նշանակելիորեն ավելի
նուրբ հոտառություն ունի, քան մարդը, բայց նա չի տար-
բերում այն հոտերի մեկ հարյուրերորդական մասն ան-
գամ, վորոնք մարդու համար տարբեր իրերի վորոչ հատ-
կանիչեր են հանդիսանում: Իսկ շոշափելիքի զգայությունը,
վոր կապիկ մոտ շատ թույլ կերպով հանդես է դալիս ամե-
նակողիս, սաղմային ձևով, մշակվել-զարգացել է մարդու
հենց ձեռքի զարգացման հետ միասին, աշխատանքի շնոր-
հիվ:

Ուղեղի և նրան յենթակա զգայարանների, ավելի ու
ավելի պայծառացող գիտակցության, արատակցիայի և
մտածանդման ընդունակության զարգացումը հակադարձ
աղղեցություն ունեցավ աշխատանքի և լեզվի վրա, Վեր-
կուսին էլ տալով հետագա զարգացման նորանոր խթաններ:
Այս հետագա զարգացումը մարդու՝ կապիկից վերջնականա-
պես զատվելու մոմենտից սկսած ընավ չվերջացավ, այլ,

ընդհանրապես, հետո եւ շարունակեց. տարբեր ժողովուրդներին մոտ և տարբեր եզրխաններում աստիճանով և ուղղութեամբ տարբեր լինելով, յերբեմն նույնիսկ ընդհատվելով տեղական ու ժամանակավոր հետադարձ շարժումներով, այդ պարզացումն ընդհանուր առմամբ և ամբողջութեամբ հզոր քայլվածքով առաջ եր բնթանում, ոտանալով, մեկ կողմից, նոր հզոր խթան, իսկ մյուս կողմից՝ ավելի վորոշ ուղղութեան այն բանի շնորհիւ, վոր պատրաստի մարդու յերևան դալով ի լրումն առաջացալ ևս մի նոր տարր՝ հասարակութունը:

Հավանորեն անցան հարյուր-հազարավոր տարիներ, — վորոնք չեղիքի պատմութեան մեջ ունեցան Պոչ ավելի մեծ նշանակութեան, քան վայրկյանը մարդու կյանքում,¹ — մինչև Պոր ծառերի վրա մաղցող կապիկների հոտից առաջացալ մարդկային հասարակութեանը: Բայց այնուամենայնիւ նա, վերջապես, հանդես չեկալ: Քեւ Պոչ և դարձյալ մարդկային հասարակութեան այն բնորոշ հատկանիշը, վորը նրան տարբերում է կապիկների հոտից: — Աշխատակցութեան: Կապիկների հոտը բախականանում էր նրանով, Պոր իսպառ լալում էր իրենց շրջանում չեղած ուտելիքը, շրջան, վորի չափերը վորոշվում էին աշխարհագրական պայմաններով կամ հարևան հոտերի դիմադրութեան աստիճանով: Նա թափառում էր վայրից-վայր և կռիւ մեջ էր մտնում հարևան հոտերի հետ, ձգտելով նոր, կերով հարուստ շրջան ձեռք բերել, բայց նա ընդունակ չէր այն շրջանից, վորտեղ նա իրեն համար կեր եր հայթայթում, ավելի բան ստանալ, քան այն, ինչ շրջանը տալիս եր բնութեանից, բացառութեամբ թերևս այն բանի, վոր հոտն անդիտակցաբար իր կզկղանքով պարարտացնում էր հողը: Հենց Պոր կեր մատակարարելու ընդունակ բոլոր մարդերը գրավեցին, կապիկների բնակչութեան ավելացումն անհնարին դարձալ: Լավագույն դեպքում այդ բնակչութեանը քանակի

¹ Այս բնագավառում առաջին կարգի հեղինակութեանը, օեր Ուելլամ Տոմսոնը հաղկէ և, թե հավանաբար հարյուր միլիոն տարուց քիչ ավելի յե անցել այն ժամանակներից, ինչ յերկիրն այնքան ստեց, վոր նրա վրա կարող էին ապրել բույսերն ու կենդանիները: (Նմանիս ծանոթագրութեանը):

կողմից կարող եր միևնույն մակարդակի վրա մնալ: Բայց բոլոր կենդանիները վերին աստիճանի վատնող են անդի տարկանների նկատմամբ և բացի այդ հաճախ սողմում Պոչ չենչացնում են նրանց բնական աճը: Գայլն, ի հակադրութեան Պորսորդի, չի խնայում այժամին, Պորն առաջիկա տարում պիտի նրան ուղիկներ տար: Հոռնաստանում այժմերը լսիկելով մանր թփուտի մատուցը, թույլ չտալով նրան բարձրանալ, մերկացրին չեղիքի բոլոր լեռները: Կենդանիների այս «գիշատիչ տնտեսութեանը» կարևոր դեր է խաղում տեսակների աստիճանական փոփոխման պրոցեսում, վորովհետև այդ հարկադրում է նրանց հարմարվել կերակրի նոր, նրանց համար անսովոր տեսակներին, Պորի շնորհիւ նրանց արյունը քիմիական ուրիշ բաղադրութեան է ոտանում և ֆիզիկական ամբողջ կազմն աստիճանաբար այլ է դառնում, իսկ միանգամ ընդմիշտ հաստատված տեսակները վոչնչանում են: Անկասկած է, Պոր այս գիշատիչ տնտեսութեանը խիստ նպաստել է մեր նախնիքների մարդկանց փոխարկվելուն: Կապիկների այն ռասայի մոտ, վորը շատ ու շատ դերադանցում էր մնացած բոլորին խելամուռութեամբ և հարմարվողութեամբ, այս գիշատիչ տնտեսութեանը պետք է հասցներ այն բանին, Պոր Պորկես կերակուր սկսեցին գործածվել ավելի ու ավելի մեծ քանակութեամբ նոր բույսեր, իսկ այդ բույսերից՝ ավելի ու ավելի մեծ քանակութեամբ ուտելի մասեր, մի խոսքով՝ հասցնում էր այն բանին, Պոր կերակուրն ավելի ու ավելի բազմազան էր դառնում, Պորի հետևանքով որդանիզմի մեջ ավելի ու ավելի բազմազան նյութեր թափանցեցին, Պորոնք քիմիական պայմաններ ստեղծեցին այդ կապիկներին մարդ դառնալու համար: Բայց այս ամենը դեռ աշխատանք չէր լատի բուն խմաստով: Աշխատանքն սկսվում է գործիքներ պատրաստելուց: Իսկ ինչ էն ներկայացնում ամենից ավելի հին գործիքները, վոր մենք գտնում ենք, — ամենից ավելի հները, դատելով գտնված այն առարկաներից, վոր մեզ ժառանգութեան են մնացել նախապատմական մարդկանցից և իրենց կյանքի չեղանակով ամենից ավելի վաղ պատմական ժողովուրդներից, ինչպես նաև ժամանակակից ամենից

ավելի պրիմիտիվ վայրենիներէն: Այս գործիքները Պորո-
գության և ձկնորսության գործիքներ են. առաջինները
միաժամանակ նաև զենք են: Բայց վորոգությունն ու ձկն-
որսությունը քննթաղում են անցում բացառապէս բու-
սական կերակուր գործածելուց զեւելի դրա հետ միասին
նաև մսի գործածումը, իսկ դա նոր կարևոր քայլ է հան-
դիսանում զեւելի մարդու փոխարկումը տանող ճանապարհ-
հին: Մտեղեն կերակուրը համարյա պատրաստի ձևով պա-
քուցակում եր այն ամենից ավելի կարևոր նյութերը, վո-
րոնց կարիքն է զգում որդանիզմը նյութերի իր փոխանա-
կության համար: Նա կրճատեց մարսողության պրոցեսը և
դրա հետ միասին՝ որդանիզմի մեջ տեղի ունեցող մյուս
վեգետատիվ (այսինքն բուսական կյանքի յերևույթներին
համապատասխան) պրոցեսներն տեղափոխուեց և դրանով
ավելի շատ ժամանակ, նյութ և եներգիտ տնտեսեց կենդա-
նական՝ այս բառի բուն իմաստով՝ կյանքի ակտիվ արտա-
հայտման համար: Վիսկ Պորքան ավելի քեր ձևափոխող
մարդը հեռանում բուսական թաղամորությունից, այնքան
ավելի քեր նա վեր բարձրանում նաև կենդանուց: Ինչպես
վայրի կատուներին և շներին մտեղեն կերակրի հետ միա-
սին բուսական կերակրին վարժեցնելը նպատեց, Պոր
նրանք մարդու սպասափորները դառնան, այնպես էլ բու-
սական կերակրի հետ միասին մտեղեն կերակուր գործածե-
լու սովորութիւնը չափանցանց նպաստեց ձևափոխող մարդու
Փիլիպինական ուժի և ինքնուրույնության մեծացմանը: Բայց
մտեղեն կերակուրն ամենից ավելի էջական արդեցություն
ունեցաւ ուղեղի վրա, վորը դրա շնորհիվ առաջիմ համե-
մատությամբ անհամեմատ ավելի մեծ քանակով ստացաւ
այն նյութերը, Պորոնք անհրաժեշտ են նրա սնման և դար-
դացման համար, Պոր նրան հնարափորություն տվեց ավելի
արագ և ավելի լրիվ կատարելագործել սերնդէ սերունդ:
Թող ներվի ասել, պարսնայք վեգետարիաններ, Պոր մարդը
չէր կարող մարդ գտնաւ առանց մտեղեն կերակրի, և յե-
թե մտեղեն կերակրի գործածությունը մեզ հայանի բոլոր
ժողովուրդների մոտ այս կամ այն ժամանակ առաջ է
բերել նույնիսկ մարդակերություն (ընդունելիների նախնիք-

ները, վեգետարները, կամ վեգետները, դեռ X դարում
ուսում էլին իրենց ծնողներին), ապա դա մեզ համար
այժմ արդեն վոչ մի նշանակութուն չի կարող ունենալ:

Մտեղեն կերակրի գործածությունը հասցրեց քերկու նոր
նվաճումներ, Պորոնք վճռական նշանակութուն ունեն
կրակից ոգտվելուն և կենդանիների ընտելացմանը: Առաջինն
ե՛լ ավելի կրճատեց մարսողության պրոցեսը, վորովհետեւ
նա բերանին հասցնում եր, այսպես ասած, արդեն կիսա-
մարս կերակուր: Քերկրորդը հարստացրեց մտեղեն կերակրի
պաշարը, վորովհետեւ վորսորդության կողքին նա նոր աղ-
բյուր բաց արեց, վորտեղից դա ավելի կանոնափոր կերպով
կարելի էր ստանալ, և բացի այդ, կաթի և կաթնամթերք-
ների ձևով նոր, իր բաղադրությամբ մսին առնվազն հա-
վասարածեք, սննդի առարկա մատակարարեց: Այսպիսով
արդեն այս յերկու նվաճումներն ել անմիջականորեն մար-
դու համար ազատադրման նոր միջոցներ հանդիսացան: Մ
Այստեղ մենք չենք կարող մանրամասն կանգ առնել դրանց
անուղղակի հետեանքներն վրա, վորքան ել դրանք կարևոր
ընեն մարդու և հասարակության զարգացման համար, վո-
րովհետեւ դա մեզ շատ հեռու կտաներ:

Ինչպես վոր մարդը սովորեց ուտել այն ամենը, ինչ
ուտելի է, այնպես էլ նա սովորեց ապրել նաև բոլոր կլի-
մաներում: Նա տարածվեց բնակության համար պիտանի
յերկրով մեկ, նա միակ կենդանին է, վոր ի միճակի յեր
այդ անել ինքնուրույն կերպով: Մյուս կենդանիները, վո-
րոնք հարմարվել էին բոլոր կլիմաներին, այդ սովորե-
ցին վոչ թե ինքնուրույն կերպով, այլ մարդուն հետեւելով
միայն՝ բնտանի կենդանիները և պարագիտ-միջատները:
Իսկ սկզբնական հայրենիքի հալասարաշատի տաք կլիմայից
ավելի ցուրտ յերկրներ անցնելը, վորտեղ տարին բաժան-
վում է ձմռան և ամռան, նոր պահանջմունքներ ստեղծեց,
բնակարանի և հագուստի պահանջմունքներ ցրտից և խոնա-
փությունից պաշտպանելու համար, ստեղծեց, այսպիսով,
աշխատանքի նոր բնագաւառներ ու դրա հետ միասին դո-
րծունեության նոր տեսակներ, վորոնք մարդուն ավելի ու
ավելի էլին հեռացնում կենդանուց:

130

Մեծքի, խոսելու որդանների և ուղեղի համատեղ գործունեություն չնորհիվ վնասված միայն ամեն մեկի մոտ առանձին, այլ և հասարակության մեջ, մարդիկ ընդունակություն ձեռք բերին ավելի ու ավելի բարդ ուղեգծեր կատարելու, իրենց ավելի ու ավելի բարձր նպատակներ զննելու և դրանց հասնելու: Բուն աշխատանքը սերնդեսերունդ ավելի բազմազան, ավելի կատարյալ, ավելի բազմակողմանի յեր դառնում: Վերստիցությունն ու անստեղծագործության ավելացում հողագործությունը, ապա մանուկը, ջուլհակությունը, մետաղների մշակությունը, բրտությունը, նավարկությունը: Առևտրի և արհեստների կողքին հանդես յեկան, վերջապես, արվեստն ու գիտությունը: Յեղերից աճեցին ազգեր ու պետություններ: Զարգացան իրավունքն ու քաղաքականությունը, իսկ դրանց հետ միասին—մարդկային կեցության ֆանտաստիկ արտացոլումը մարդու գլխում՝ կրոնը: Սյուր բոլոր դոյացումների առաջ, վորոնք հանդես եյին գալիս ամենից առաջ վորակա գլխի արդյունքներ և թվում եյին մարդկային հասարակությունների վրա իշխող ինչ—վոր բան—աշխատող ձեռքի ավելի համեստ արտադրությունները հետին պլան քաշվեցին, մանավանդ վոր աշխատանքը պլանավորող գլուխն արդեն հասարակության զարգացման շատ վաղ աստիճանի վրա (որինակ, արդեն նախնական ընտանիքում) հնարավորություն ուներ ստիպել ուրիշների ձեռքերին կատարելու իր կողմից նշած աշխատանքը: Քաղաքակրթության արագ զարգացման ամբողջ յերակտիվն սկսեցին վերադրել գլխին, ուղեղի զարգացմանն ու գործունեությունը:

Մարդիկ սովորեցին իրենց գործողությունները բացատրել իրենց մտածամաբ, փոխանակ դրանք բացատրելու իրենց պահանջմունքներով (վորոնք այդ դեպքում, իհարկե, անդրադառնում են գլխում, գիտակցվում են), և այս կերպ ժամանակի ընթացքում առաջացավ իդեալիստական այն աշխարհայեցողությունը, վորն իշխեց մտքերի վրա հատկապես անտիկ աշխարհի անկման ժամանակից: Նա այժմ ել և իշխում նրանց վրա այն չափով, վոր անդամ Դարվինի դպրոցից յեկած մատերիալիստներն տրամադր-

ված բնադետները դեռ չեն կարողանում հստակ պատկերացում կազմել մարդու ծագման մասին, վորովհետև, այս իդեոլոգիայի ազդեցության գործությամբ, նրանք չեն տեսնում այն դերը, վոր խաղացել և աշխատանքն այդ դեպքում:

Ինչպես արդեն հարևանցիորեն հիշվեց, կենդանիներն իրենց գործունեությունը նույնպես փոխում են արտաքին բնությունը, թեև վոր այն չափով, ինչպես մարդը, և իրենց չընթացող միջավայրի՝ նրանց կողմից կատարվող այս փոփոխությունները, ինչպես տեսանք, հակադարձ ազդեցություն են անում փոփոխություններ կատարողների վրա, նրանց մեջ իրենց հերթին վորոշ փոփոխություններ առաջ բերելով: Չե՞վոր բնության մեջ վորինչ էլ կատարվում անջատորեն: Յուրաքանչյուր յերևույթ ազդում և մյուսի վրա և հակառակը, ու այս բազմակողմանի շարժման և փոխազդեցության փաստի մոռացումն և մեծ մասամբ, վոր խանգարում և մեր բնադետներին պարզորոշ տեսնելու անգամ ամենահասարակ բաները: Մենք տեսանք, թե ինչպես այժերն արդեն են հանդիսանում անտառների վերականգնմանը Հունաստանում: Ս. Հեդինեյի կղզու վրա՝ այստեղ ժամանած առաջին ծովագնացների բերած այժերն ու խոզերը կարողացան վորինչանցել համարյա առանց մնացորդի կղզու ամբողջ հին բուսականությունը և դրանով հող նախադատարասեցին այն ուրիշ բույսերի տարածման համար, վոր իրենց հետ բերին հետագա ծովագնացներն ու համար, վոր իրենց հետ բերին հետագա ծովագնացներն ու կոյոնիստները: Բայց յերբ կենդանիները յերկարատև ազդեցություն են ունենում իրենց չընթացող բնության գեցություն են ունենում իրենց չընթացող բնության վրա, ապա այդ տեղի յե ունենում առանց նրանց կողմից վորեն գիտավորության և բուն այդ կենդանիների նկատմամբ ինչ—վոր պատահական բան և հանդիսանում: Սակայն վորքան ավելի յեն մարդիկ հեռանում կենդանիներից, այնքան ավելի յե բնության վրա նրանց ունեցած ազդեցությունը նախամտածված, պլանայալի, վորոշ, առաջուց նըշված նպատակներին ուղղված գործողությունների բնույթ տալով: Կենդանին վորինչանցում և վորեն վայրի բուսականությունը, չիմանալով թե ինչ և անում: Իսկ մարդը վոր-

չընչացնում ե նրա համար, վոր աղատված հողի վրա հացահատիկներ ցանի, ծառեր տնկի կամ այլի գցի, գիտենալով, վոր դա նրան կտա մի բերք, վորը միքանի անգամ կգերազանցի իր ցանածին: Նա մի յերկրից մյուսն ե տեղափոխում բույսեր ու ընտանի կենդանիներ և այս կերպ փոխում ե ամբողջ աշխարհամասերի ֆլորան և ֆաունան: Դեռ ավելին: Բուծման և ամեցման արհեստական զանազան յեղանակներով ոգնությամբ բույսերն ու կենդանիներն այնպես են փոխվում մարդու ձեռքի տակ, վոր անճանաչելի յեն դառնում: Վայրի այն բույսերը, վորոնցից ծագում են մեր հացահատիկային կուլտուրաները, դեռ մինչև այժմ չեն գտնված: Թե ինչ վայրի կենդանուց են սերվում մեր շները, վորոնք անգամ միմյանց միջև ել այնքան լսիտ տարբերվում են իրարից, կամ մեր ձիերի այնքան բազմաթիվ տեսակները, — դեռ ելի վիճելի յե մնում:

Սակայն, ըստիւնքյան հասկանալի յե, վոր մենք մտադիր չենք ժխտելու պլանաչափ, նախամտածված գործողություններ կատարելու ընդունակությունը կենդանիների մոտ: Ընդհակառակը, գործողությունների պլանաչափ յեղանակն արդեն սաղմային վիճակի մեջ գոյություն ունի ամենուրեք, վորտեղ պրոտոպլազմա կա, վորտեղ կենդանի սպիտակուց գոյություն ունի և հակադրում ե, այսինքն թեկուզ ամենապարզ շարժումներ և կատարում, վորպես հետևանք դրսից յեկած վորոշ գրգիռների: Այդպիսի ռեակցիա տեղի ունի արդեն այնտեղ, վորտեղ դեռ վոշ մի բջիջ չկա, ել չխոսելով ներթափն բջիջի մասին: Այն յեղանակը, վորի ոգնությամբ միջատակեր բույսերն իրենց վորան են բռնում, վորոշ տեսակետից նույնպես պլանաչափ ե, թեև միանգամայն անդիտակցորեն և կատարվում: Կենդանիների մոտ զխտակցական, պլանաչափ գործողություններ կատարելու ընդունակությունը զարգանում ե ներթափն սխտեմի զարգացմանը համապատասխան և արդեն կաթնասունների մոտ բավականաչափ բարձր աստիճանի յե հասնում: Անգլիացում չնեթով աղվեսի վորս անելիս կարելի յե միշտ դիտել, թե ինչպես աղվեսը կարողանում ե առանց սխալվելու գործադրել վայրի իր հիանալի ճանաչումն իրեն հե-

տապնդողներից թաղնվելու համար, և թե ինչպես նա լայն գիտե և կարողանում ե ոգտադնոթել տերիտորիայի՝ իր համար բարենպաստ այն բոլոր հատկությունները, վորոնք ընդհատում են նրա հետքը: Մեր ընտանի կենդանիների մոտ, վորոնք ավելի շատ են զարգացած մարդկանց հետ շփվելու շնորհիվ, կարելի յե ամեն ոք խորամանկության ախտեր դիտել, վորոնք յերեխաների նույնպիսի ախտերի հետ համասար մակարդակի վրա յեն կանդնած: Վորովհետև ինչպես վոր մոր արդանդում մարդկային սաղմի զարգացման պատմությունը մեր կենդանական նախնիքների՝ սկսած վորդից՝ միլիոնավոր տարիների ընթացքում ծախսված ֆիզիկական զարգացման պատմության կրճատ կրկնությունն ե միայն, ճիշտ այնպես ել յերեխայի հոգեկան զարգացումը նույն նախնիքների, — առնվազն ավելի ուշ նախնիքների, — մտավոր զարգացման ել ավելի՝ կրճատ կրկնությունն ե հանդիսանում միայն: Բայց բոլոր կենդանիների պլանաչափ բոլոր գործողությունները չկարողացան բնության վրա իրենց կամքի դրոշմը դնել: Այդ կարողացալ անել միայն մարդը:

Կարճ ասած, կենդանին միայն ոգտվում ե արտաքին բնությունից և նրա մեջ փոփոխություններ ե կատարում պարզապես իր ներկայության շնորհիվ: Իսկ մարդն իր մացրած փոփոխություններով ստիպում ե նրան, վոր իր՝ մարդու նպատակներին ծառայի, մարդն իշխում ե բնության վրա: Յեվ դա մարդու վերջին, էյական տարբերությունն ե հանդիսանում մնացած կենդանիներից, և այդ տարբերությունը մարդը դարձյալ պարտական ե աշխատանքին¹:

Սակայն չափ ել չհրապուրվենք բնության վրա մեր տարած հաղթություններով: Յուրաքանչյուր այսպիսի հաղթության համար նա մեզինց վրեժխնդիր ե լինում: Այս հաղթություններից յուրաքանչյուրը, ճիշտ ե, առաջին հերթին ունենում ե այն հետևանքները, վորոնք ակնկալում եյինք մենք, բայց յերկրորդ և յերրորդ հերթին ունենում ե բոլորովին այլ, չնախատեսված հետևանքներ, վորոնք

¹ Լուսանցքում մտախոփ նշված ե՝ «Աղվապցում»: Խմբ.:

չատ հաճախ վոչնչացնում են առաջինների նշանակութեամբը: Այն մարդիկ, վորոնք Միջագետքում, Հունաստանում, Փոքր Ասիայում և այլ տեղերում անտառներն արմատախիլ ելին անում, վորպեսզի այս կերպ վարելահող ձեռք բերեն, իրենց մտքով անգամ չեյին անցկացնի, վոր իրենք դրանով այդ յերկրների այժմյան անապատացման սկիզբը դրին, անտառների հետ միասին դրանց զրկելով նաև խոնավութեան հավաքման ու սրահպանման կենտրոններից: Յերբ արլայան իտալացիք լեռների հարավային լանջում կտրատում եյին փշատերև անտառները, վոր այնքան խնամքով պահպանվում են հյուսիսային լանջում, չեյին նախատեսում, թե դրանով իրենք կտրում են անասնապահութեան արմատներն իրենց մարդում: Ե՛լ ավելի քիչ եյին նրանք նախատեսում, թե դրանով իրենք տարվա մեծ մասն անջուր կթողնեն իրենց լեռնային աղբյուրները, վորոնք անձրևների ժամանակաշրջանում դաշտավայրի վրա ե՛լ ավելի կտտաղի հեղեղներ են թափելու: Յեվրոպայում կարտոֆիլ աարածոդները չլիտեյին, թե իրենք այլաչափ սրալարների հետ միաժամանակ տարածում են նաև զեղծախտը: Յեվ այսպես յուրաքանչյուր քայլափոխում փաստերը մեզ հիշեցնում են, թե մենք բնութեան վրա ամենևին չենք իշխում այնպես, ինչպես նվաճողն և իշխում ոտար ժողովրդի վրա, նրա վրա չենք իշխում այնպես, ինչպես բնութեանից դուրս գտնվող վորեւ մեկը,—թե մենք, ընդհակառակը, մեր մարմնով, արյունով ու ուղեղով պատկանում ենք նրան և գտնվում ենք նրա ներսում, թե մեր ամբողջ տիրապետութեանը նրա վրա այն և, վոր մենք, ի տարբերութեան բոլոր մյուս երկրներից, կարողանում ենք ճանաչել նրա որևէքները և ճշտորեն կիրառել դրանք:

Յեվ մենք, իսկապես, արեցք սովորում ենք ավելի ու ավելի ճիշտ հասկանալ բնութեան որևէքները և ճանաչել նրա բնական ընթացքի մեջ մեր ունեցած ակտիվ միջամտութեան ինչպես ավելի մոտիկ, այնպես ել ավելի հեռավոր հետևանքները: Առանձնապես մեր դարում բնագիտութեան ունեցած վիթխարի հաջողութեանների ժամանակներից սկսած, մենք ավելի ու ավելի ընդունակ ենք դառնում այն բանի համար, վոր կարողանում ենք հաշվի

առնել նաև արտադրութեան բնագավառում մեր կատարած դործողութեաններից գոնե ամենից ավելի սովորականների ավելի հեռավոր բնական հետևանքները և դրանով իսկ իշխել նրանց վրա: Իսկ վորքան ավելի մեծ չափով այդ փաստ դառնա, այնքան ավելի մեծ չափով մարդիկ նորից վո՛չ միայն կզգան, այլև կզիտակցեն իրենց միասնութեանը բնութեան հետ և դրանով անհնարին կդառնա վոգու և նյութի, մարդու և բնութեան, հոգու և մարմնի միջև ինչ-վոր հակադրութեան վերաբերյալ այն անխառն ու հակաբնական պատկերացումը, վոր յերևան յեկավ Յեվրոպայում կլասիկ հին դարի անկման ժամանակից և ամենաբարձր զարգացմանը հասավ քրիստոնեյութեան մեջ:

Բայց յեթե հաղարամյակներ են պահանջվել, վոր մենք սովորենք վորոշ չափով վաղորդ հաշվի առնել մեր՝ արտադրութեանն ուղղված դործողութեանների ավելի հեռավոր բնական հետևանքները, ապա այդ գիտութեանն անհամեմատ ե՛լ ավելի դժվար եր հաջողվում այդ դործողութեանների հասարակական ավելի հեռավոր հետևանքների վերաբերմամբ: Մենք հիշատակեցինք կարտոֆիլի մասին և նրա տարածմանն ուղեկցող զեղծախտի մասին: Բայց ի՞նչ մի բան և զեղծախտն այն հետևանքների համեմատութեամբ, վոր ունեցավ ամբողջ յերկրների ժողովրդական մասանների կենսավիճակի համար բանվոր բնակչութեան սնունդը մեն միայն կարտոֆիլով սահմանափակելը: Ի՞նչ և զեղծախտը այն սովի համեմատութեամբ, վորը 1847 թ., կարտոֆիլի հիվանդութեան հետևանքով, տեղի ունեցավ Իռլանդիայում և վորը զերեզման իջեցրեց միայն կարտոֆիլով կամ համարյա միայն կարտոֆիլով սնվող մի միլիոն իռլանդացիներ, իսկ յերկու միլիոնին ել ստիպեց գաղթել ովկիանոսի այն կողմը: Յերբ արարները սովորեցին ալկոհոլ թորել, նրանց մտքովն անգամ չեր անցնում, թե իրենք դրանով ստեղծեցին այն գլխավոր զենքերից մեկը, վորի ողնութեամբ կլոչնացվեն այն ժամանակ դեռ նույնիսկ չհայտարարված Ամերիկայի բնիկները: Իսկ յերբ հետո կոլումբոսը գտավ Ամերիկան, ապա նա չգիտեր, թե ինքը դրանով նոր կյանքի կոչեց Յեվրոպայում վաղուց արդեն անհետացած ստրկութեան ինստիտուտը և նեգրերի

առևտրի հիմքը դրեց: XVII և XVIII դարերում շողեմեքե-
նա ստեղծելու վրա աշխատող մարդիկ չէին յենթադրում,
թե իրենք ստեղծում են մի գենը, վորն ավելի մեծ չա-
փով, քան վորեւէ այլ գենը, կհեղափոխի հասարակական
հարաբերություններն ամբողջ աշխարհում և վորը, հատ-
կապես Յեւրոպայում, հարստությունները փոքրամասնու-
թյան ձեռքում կենտրոնացնելու և հսկայական մեծամաս-
նության պրոլետարիզացիայի միջոցով նախ սոցիալական ու
քաղաքական տիրապետություն կտա բուրժուազիային, իսկ
հետո դասակարգային պայքար առաջ կընդունէր բուրժուա-
զիայի և պրոլետարիատի միջև, պայքար, վորը կարող է
վերջանալ բուրժուազիայի տապալմամբ և դասակարգային
բոլոր հակադրությունների վոչնչացմամբ միայն: Բայց
այս բնագավառումն ել մենք յերկար, հաճախ դառն փորձի
միջոցով և պատմական նյութի առաջման ու անալիզի
միջոցով աստիճանաբար սովորում ենք պարզել մեր ար-
տադրական գործունեյության կողմնակի, ավելի հեռավոր
հասարակական հետևանքները, և դրանով իսկ մենք հնա-
րավորություն ենք ստանում մեր տիրապետությանն ու
կարգավորմանը յենթարկելու նաև այս հետևանքները:

Սակայն այս կարգավորումն իրագործելու համար պա-
հանջվում է ավելին, քան սոսկ իմացությունը: Դրա հա-
մար պահանջվում է լիակատար հեղաշրջում արտադրու-
թյան միջև այժմ գոյություն ունեցող մեր յեղանակի մեջ
և դրա հետ միասին՝ մեր այժմյան ամբողջ հասարակա-
կարգում:

Մինչև այժմ գոյություն ունեցող բոլոր արտադրայի-
ղանակներն աշխատանքի միայն մերձավորադույն, ամենից
ավելի անմիջական ոգտակար եֆեկտներին հասնելը նկատի
ունեցին: Իսկ հետագա հետևանքները, վոր յերևան են գա-
լիս միայն ավելի ուշ և աղբեցություն են ունենում աստի-
ճանական կրկնման և կուտակման շնորհիվ, բոլորովին
հաշվի չէին առնվում: Հողի նախնական համայնական սե-
փականությունը՝ մի կողմից՝ համապատասխանում էր
մարդկանց զարգացման այնպիսի մակարդակին, վորն ընդ-
հանրապես նրանց հորիզոնը սահմանափակում էր նրանով,

ինչ ամենից ավելի մոտիկ է գտնվում, իսկ մյուս կողմից՝
նա յենթադրում էր ազատ հողերի վորոշ ավելցուկի առկա-
յություն, ավելցուկ, վորը վորոշ ասպարեզ էր ընձեռում
այդ պրիմիտիվ անտեսության հնարավոր անբարենպաստ
հետևանքները չտկելու համար: Յերբ ազատ հողերի այս
ավելցուկն սպառվեց, համայնական սեփականությունը
անկման հասավ: Իսկ արտադրության՝ դրան հաջորդող
ավելի բարձր ձևերը տարան դեպի այն, վոր ընակչու-
թյունը բաժանվեց տարբեր դասակարգերի և դրանով իսկ
հակադրություն առաջացավ տիրապետող և ճնշվող դասա-
կարգերի միջև: Վորպես դրա հետևանք տիրապետող դա-
սակարգի շահը դարձավ արտադրության շարժիչ գործոն,
ինչ չափով արտադրությունը չէր սահմանափակվում
ճնշվածների վոգորմելի գոյությունը վորևէ կերպ պահպա-
նելու խնդրով: Ամենից ավելի լիակատար կերպով այդ
անց է կացված արտադրության՝ Արևմտյան Յեւրոպայում
այժմ տիրապետող կապիտալիստական արտադրայեղանակի
մեջ: Արտադրության և փոխանակության վրա իշխող
առանձին կապիտալիստները կարող են հող տանել իրենց
գործողությունների ամենից ավելի անմիջական ոգտակար
եֆեկտների մասին միայն: Դեռ ավելին, անգամ բուն այս
ոգտակար եֆեկտը—վորչափով խոսքն արտադրված ու
փոխանակվող ապրանքի ոգտակարության մասին է—բոլոր-
ովին հեաին պլան է քաշվում, և միակ չարժիչ գոպանակը
վաճառքի ժամանակ շահ ստանալն է դառնում:

Բուրժուազիայի հասարակադիտությունը, կլասիկ
քաղաքատնտեսությունը, զբաղվում է առավելապես մարդ-
կանց՝ արտադրությանն ու փոխանակությանն ուղղված՝
գործողությունների հասարակական այն հետևանքներով
միայն, վորոնց հասնելն է անմիջականորեն նկատի առնը-
վում: Այդ լիովին համապատասխանում է այն հասարակա-
կարգին, վորի թեորետիկ արտահայտությունն է նա հան-
դիսանում: Քանի վոր առանձին կապիտալիստներն արտա-
դրությամբ և փոխանակությամբ զբաղվում են հանուն ան-
միջական շահի, ապա առաջին հերթին նկատի կարող են

առնվել միայն մերձավորագույն, ամենից ավելի անմիջա-
կան հետեանքները: Յերբ առանձին դործարանատերը կամ
վաճառականն իր պատրաստած կամ դնած ապրանքը վա-
ճառում է սովորական շահույթով, այս դեպքում լիովին բավա-
րարում է նրան, և նա բոլորովին չի հետաքրքրվում, թե
ինչ կպատահի հետո այս ապրանքի և այն գնող անձի հետ:
Ժիշտ այդպես է նաև հենց այդ դործողությունների բնա-
կան հետեանքների դրությունը: Կուրայի խաղանացի պլան-
տատորների ինչ փուլին եր, յերբ նրանք հրդեհում ելին
բեռնալանջերի անտառները և գոյացած մոխրից ստանում
եյին պարարտանյութ, փորը բավականացնում եր սուրճի
շառ յեկամտաբեր ծառերի մեկ սերնդին—նրանց ինչ հոգն
եր, թե հետո արևադարձային տեղատարափ անձրևները
հողի՝ այսուհետև անպաշտպան մնացած վերնաշերտը
բշում—տանում ելին, իրենցից հետո միայն լերկ ժայռեր
թողնելով: Արդի արտադրաշղանակի պայմաններում
մարդու դործողությունների թե՛ բնական և թե՛ հա-
տարակական հետեանքների նկատմամբ հաշվի չե առնվում
գլխավորապես միայն առաջին, ամենից ավելի ակներև
արդյունքը: Յեվ ընդամենը դեռ զարմանում են, թե այս
արդյունքի հասնելուն ուղղված դործողությունների ավելի
հեռավոր հետեանքները բոլորովին այլ, մեծ մասամբ բո-
լորովին հակադիր են դուրս գալիս նրան. թե պահանջի և
առաջարկի, ներդաշնակությունը փոխարկվում է իր բե-
վեռային հակադրություն, ինչպես այս ցույց է տալիս յու-
րաբանչյուր տասնամյա արդյունաբերական ցիկլի ընթացքը
և ինչպես դրանում կարող եր համոզվել նաև Գերմանիան,
փորն այսպիսի փոխարկման մի փոքրիկ նախնադանք ապ-
րեց «կրախի» ժամանակ¹. Թե սեփական աշխատանքի վրա
հիմնվող մասնավոր սեփականատիրությունն իր հետագա
զարգացման ժամանակ անհրաժեշտորեն փոխարկվում է աշ-
խատավորների սեփականության բացակայության, մինչդեռ
ամբողջ գույքն ավելի ու ավելի կենտրոնանում է վոչ—աշ-
խատողների ձեռքում. թե [....]²:

¹ Ենդելը նկատի ունի 1873—1874 թ.թ. անտեսական կրիզիսը: Խմբ.:

² Ձեռագիրն այսպես ընդհատվում է: Խմբ.:

Թարգմ. Հ. Մանուկյան

Խմբ. Հ. Ասլանյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Ա. Մանուկյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արզվյան

Գլավիտի լիազոր ե—1089, հրատ. № 778

Պատվեր № 17, տիրաժ 6000

Հանձնվել է արտադրություն 15/I 1940 թ.

Ստորագրված է տպագրելու 5/II 1940 թ.

Գինը 50 կ.

Քաղաքական գրականության պետական հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլանիերդյան № 65

4400 80 0

ИЗДАТЕЛЬСТВО
ПОЛТАВЫ И ОБОРОТ
ПЕРВАЯ ПЕРВАЯ
И ПЕРВАЯ
ПЕРВАЯ ПЕРВАЯ
ПЕРВАЯ ПЕРВАЯ

4164 50 4.

Ф. ЭНГЕЛЬС
РОЛЬ ТРУДА В ПРОЦЕССЕ
ПРЕВРАЩЕНИЯ ОБЪЕМЫ
В ЧЕЛОВЕКА

Государственное издательство политической литературы
Ереван • 1940

«Ազգային գրադարան»



NL0170430

